

ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական

համալսարանի գիտական խորհրդի 2015թ. հունվարի 26-ի նիստի

/արձանագրություն թիվ 7/

Լսելով և քննարկելով <<Համալսարանի կազմակերպա-իրավական կարգավիճակի մասին>> հարցը / զեկ. ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Արմեն Թամազյան/ և հաշվի առնելով Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ու գործունեության առավել արդյունավետ կազմակերպման առումով հիմնադրամի կարգավիճակի առավելությունները, առաջնորդվելով համալսարանի կանոնադրության 113-րդ կետով, համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպա-իրավական տարբեր կարգավիճակների / ՊՈԱԿ և հիմնադրամ/ առանձնահատկությունների մասին ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Ա. Թամազյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հավանություն տալ <<Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրամի վերակազմավորելու առաջարկությանը:
3. Դիմել ՀՀ կառավարությանը <<Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրամի վերակազմավորելու առաջարկությամբ:

Գիտական խորհրդի նախագահ

Ռուբեն Միրզախանյան